



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝  
« **ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ  
ՆԱԽԱՐԱՐ**»



*Մ. Միսնասյան*  
Մ. ՄԻՆԱՍՅԱՆ

«05» 06 2017թ

# ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԿՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ  
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 53

**Ձեռնարկողը՝**

**«*Գոլդեն Լենդ*» ՍՊԸ**

*Ք. Երևան, Ե. Կողբացի 42/57*

**Գործունեությունը՝**

**Արևիսի բազմամեդաղների հանքային դաշտում 2017-2020թթ երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ**

*« **Սյունիքի մարզ**»*

«**Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն**» ՊՈԱԿ-ի տնօրեն՝



Վ. Սահակյան

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ  
ՇՐՋԱԿԱ ՄԻԶԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ

թիվ ԲՓ 53  
'05' 06 2017թ.

**Արևիսի բազմամետաղների հանքային դաշտում 2017-2020թթ.  
երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների շրջակա միջավայրի  
վրա ազդեցության նախնական գնահատման հայտ**

Պատվիրատու՝	<<Գոլդն Լենդ>> ՍՊԸ
Նախագծող՝	<< Գոլդն Լենդ>> ՍՊԸ
Ներկայացված նյութեր՝	Նախնական գնահատման հայտ Գ կատեգորիա
Տեղադրման վայրը՝	ՀՀ Սյունիքի մարզ

*Handwritten signature and notes:*  
Արևիսի  
Տեղադրման  
Վայրը

Ըստ նախնական գնահատման հայտի՝ ՀՀ Սյունիքի մարզի Արևիսի բազմամետաղների հանքային դաշտի սահմաններում՝ հանքերնական 7.98կմ<sup>2</sup> մակերեսով տարածքում, երկրաբանական աշխատանքների կատարման ծրագիրը կազմված է <<Գոլդն Լենդ>> ՍՊ ընկերության նախաձեռնությամբ և ֆինանսական միջոցներով՝ հենվելով տեղամասում նախկինում կատարված երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների արդյունքների վրա: Իրականացվող աշխատանքների արդյունքներով նախատեսվում է ճշգրտել առանձնացված հեռանկարային տեղամասերի երկրաբանական կառուցվածքը, հանքամարմինների ձևաբանության ու տեղադրման տարրերի, օգտակար հանածոյի նյութական կազմի, որակի մասին տեղեկատվությունը, ինչպես նաև հիմնավորել տեղամասի հեռանկարային գնահատականը և մանրակրկիտ երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների նպատակահարմարությունն ու անհրաժեշտությունը: Ըստ նախնական գնահատման հայտի նախատեսվում է.

- իրականացնել Արևիսի բազմամետաղների հանքային դաշտում որոնողագնահատողական աշխատանքներ, նպատակ ունենալով հայտնաբերել հանքային մարմիններ, պարզաբանել վերջիններիս տարածական տեղադիրքերը, պարամետրերն ու նյութական կազմը, տալ դրանց արդյունաբերական նշանակության գնահատականը,
- կատարել C<sub>2</sub> կարգի պաշարների հաշվարկում և P<sub>1</sub> կարգի կանխատեսումային ռեսուրսների գնահատում,
- կատարված աշխատանքների արդյունքներով օգտակար հանածոների կանխատեսումային ռեսուրսների և պաշարների հիմնավորված գնահատմամբ կազմել երկրաբանական հաշվետվություն և ներկայացնել ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության աշխատակազմի ՕՀՊԳ-ի փորձաքննությանը:



Աշխատանքների կատարման ժամկետների սկիզբը նախատեսվում է 2017թ-ի II-րդ եռամսյակին և ավարտվելու է՝ 2020թ.-ի I-ին եռամսյակին:

Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքները նախատեսվում է իրականացնել 2 փուլով.

- առաջին փուլը կնդգրկի որոնողազանահատողական աշխատանքների կատարումը, որի ժամանակ հանքային մարմինները կուսումնասիրվեն մակերեսային փորվածքների և հորատանցքերի միջոցով, որոնց արդյունքներով կտրվի օգտակար հանածոների գնահատականը  $C_2$  և  $P_1$  կարգերով,

- երկրորդ փուլը կշարունակվի միայն առաջին էտապի աշխատանքների ժամանակ դրական արդյունքներ ստանալու դեպքում: Այս էտապում հետախուզական ցանցի խտացման միջոցով կկատարվի օգտակար հանածոյի պաշարների հաշվարկ  $C_1$  արդյունաբերական կարգերով:

Արևիսի բազամետաղների հանքային դաշտը գտնվում է Խաշխաշ լեռան լանջերի 1900-2500մ բացարձակ բարձրությունների վրա, Միսիան գետի աջակողմյան վտակների միջին հոսանքի ավազաններում: Գեոմորֆոլոգիական տեսակետից շրջանն իրենից ներկայացնում է բարձր լեռնային, խիստ կտրտված ռելիեֆի գոտի, աչքի է ընկնում ջրբաժանների ու գետահովիտների բացարձակ բարձրությունների մեծ տատանումներով: Խիստ կտրատված ռելիեֆի շնորհիվ ինտրուզիվ ապարները հաճախ հանդես են գալիս ժայռային մերկացումներով: Տարածաշրջանի օրոգրաֆիական միավորը Ջանգեզուրի լեռնաշղթան է, որը ձգվում է հյուսիս-հյուսիս-արևմուտք ուղղությամբ: Հետախուզվող շրջանի հիմնական ջրային արտերիան Միսիանգետն է իր բազմաթիվ վտակներով: Հանքային դաշտի սահմաններում կան բազմաթիվ ստորերկրյա քաղցրահամ ջրի աղբյուրներ:

Ուսումնասիրվող շրջանի մետաղագոյացման մասնագիտական դեմքը որոշվում է այստեղ գերակշռող պղինձ-մոլիբդենային հանքայնացմամբ՝ հիմնականում պղինձպորֆիրային տիպի հանքավայրերով և հանքերակույմներով: Բացի այդ շրջանում մեծ տարածում ունեն նաև երակային ապարները, որնք հիմնականում տարածված են ինտրուզիվ ապարների շրջանում և տարբեր հասակի հրաբխածին առաջացումների շրջանում:

Արևիսի բազամետաղների հանքային դաշտի երկրաբանական կառուցվացքում մասնակցում են միջին էոցենի հրաբխածին և հրաբխանստվածքային ապարները, որոնք հանդիսանում են ամենահին առաջացումները: Հանքային դաշտում լայն տարածում ունեն դիորիտ-պորֆիրիտային դայկաները, որոնց հզորությունը տատանվում է 2.0 -ից մինչև 40.0մ:

Հանքային դաշտի ապարների բնութագրական հատկություններից են ինտենսիվ հիդրոթերմալ փոփոխվածությունը, հատկապես դայկաների սահմաններում, ինչպես նաև դրանց արդյունավետությունը հանքաբերության առումով: Հիդրոթերմալ փոփոխվածությունը արտահայտված է կաոլինացումով, սերիցիտացումով, էպիդոտացումով, պիրիտացումով:

Այսպիսով հանքային դաշտը հանդիսանում է երկրաբանական մի հանգույց, որտեղ կենտրոնացված են հրաբխածին, երակային, ներժայթուկային ապարներ, որոնց կոտրատման շնորհիվ ստեղծվել են նպաստավոր պայմաններ ներփակող ապարների հիդրոթերմալ փոփոխությունների համար, ինչը պայմանավորված է խզումնային խախտումների ինտենսիվ զարգացման հետևանքով ապարների բարձր թափանցելիությամբ: Տեղաամսի հանքապարփակող ապարները հանդիսանում են ինտրուզիվ առաջացումները, որոնք ներկայացված են գրանոսիենիտներով և մոնցոնիտներով, քվարցային դիորիտներով:



Ներկայացվող ծրագրի նպատակն է կատարել որոնողական աշխատանքներ Արևիսի բազմամետաղների հանքային դաշտում, գնահատել վերջինիս մետաղաբերությունը, հայտնաբերել և առանձնացնել հեռանկարային տեղամասեր, ինչպես նաև կատարել դրանց պաշարներն ըստ C<sub>2</sub> կարգերի, իսկ կանխատեսումային պաշարները գնահատել ըստ P<sub>1</sub> կարգի:

Հետախուզման մեթոդիկայի ու միջոցների ընտրությունը կատարվել է հաշվի առնելով նրա տեղադրվածությունը, երկրաբանական կառուցվածքի առանձնահատկությունները, տեղանքի ռելիեֆի ձևը:

Ելնելով այս հանգամանքներից և այդ աշխատանքները նախաձեռնող կազմակերպությանը հատկացվող տարածքի չափսերից, հետախուզությունը նախատեսվում է կատարել երկրաբանական երթուղիների, մեխանիկական սյունակային հորատման, հետախուզաառունների, հետախուզահորերի և նմուշարկման միջոցով, տարածքում կատարելով նաև տոպոգրաֆիական հանույթ:

Տեղամասի 1:2000 և 1:10000 մասշտաբների երկրաբանական քարտեզի կազման նպատակով նախատեսվում է կատարել տոպոգրաֆիական և երկրաբանական հանույթ 7.98կմ<sup>2</sup> տարածքի վրա առանձնացված տեղամասերում, բոլոր հետախուզական փորվածքների և նմուշարկման տեղերի, ապարների երկրաբանական սահմանների գործիքային տեղադրմամբ: Նախատեսվում է հետախուզափորվածքների (մակերեսային) նմուշարկման պլանների կազմում և բոլոր փորվածքների մարկշեյդերական սպասարկում ամբողջ աշխատանքների տևողության ընթացքում:

Արևիսի բազմամետաղների հանքային դաշտի սահմաններում, երկրաբանական աշխատանքների արդյունքում հայտնաբերված հանքամարմինների հայտնաբերման և դրանց սահմանների ճշտման նպատակով նախատեսվում է անցնել 75.0կմ երթուղիներ, այդ թվում 35.0կմ-ը 1:2000 մասշտաբի, իսկ 40.0կմ-ը 1:10000 մասշտաբի: Աշխատանքների ծավալներն ըստ առանձին համայնքների կկազմի Թասիկի համայնքում՝ 48.5կմ, Բնունիսի համայնքում՝ 8.5կմ, Արևիսի համայնքում՝ 18.0կմ:

Հետախուզվող տեղամասում հանքային գոտիները խորքում հետախուզելու, հիդրոթերմալ փոփոխված ապարների և հանքայնացման բնույթը ուսումնասիրելու նպատակով նախատեսվում է հորատել 15 հորատանցք /Արևիսի համայնքում 1 հորատանցք, Բնունիսի համայնքում 2 հորատանցք և Թասիկի համայնքում 12 հորատանցք/ 185-250մ խորությամբ, ընդամենը 110.5 գծ.մ:

Հորատումը կատարվելու է ամրակայված CKP-4 հորատող հաստոցով, 112մմ, 93մմ և 76մմ տրամագծի արմաստե հորատող թագիկներով: Նախագծով նախատեսվում է հորատել 15 հորատանցք, որի համար 15 անգամ կկատարվի CKP-4 հորատող հաստոցի տեղակայում և ապատեղակայում:

Հանքերնակման արդյունաբերական գնահատման նպատակով, ծրագրով նախատեսվում է անցնել մակերեսային լեռնային փորվածքներ հանքային գոտիների բացման, այլուվիալ-դելյուվիալ նստվածքների ուսումնասիրման, մարմինների, երակների ու գոտիների հզորությունը, տարածումը, դրանց հանքայնացման համասեռությունը, տարածման և բաշխման օրինաչափությունները, նմուշարկման, ինչպես նաև մարմինների մորֆոլոգիան պարզելու համար: Անցած լեռնային փորվածքները կլինեն չկապակցված և մոտավոր: Դրանց տեղն ու դիրքը, ծավալները /խորությունները, երկարությունները/ կճշտվեն դաշտային աշխատանքների ժամանակ: Հետախուզափորվածքների անցումը IV-VIII կարգի ամրության ապարներով նախատեսվում է իրականացնել էքսկավատորի օգնությամբ:

Ծրագրով նախատեսվում է հետախուզաառունների անցում, որոնց խորությունը նախատեսվում է ընդունել միջինը 2.0մ, լայնությունը՝ 0.85մ, երկարությունը 250-500գծ.մ:

Հետախուզաառուների անցումը կիրականացվեն հիդրոթերմալ փոփոխված ապարների հանքամարմինների և ներփակող ապարների տարածմանը և տեկտոնական խախտումներին ուղղահայաց ուղղությամբ, հիմնականում ապարների կոնտակտային մասերում: Նախատեսվում է անցնել 10 մագիստրալ առուներ, ընդհանուրը 3750.0զծ.մ ծավալով, այդ թվում Արևիսի համայնքում 500զծ.մ /հ/ա 1 և 2, յուրաքանչյուրը 500զծ.մ/, Թասիկի համայնքում 2250.0զծ.մ /հ/ա NN 4, 5, 6 յուրաքանչյուրը 250զծ.մ և հ/ա NN 3, 9, 10՝ 500զծ.մ ծավալով/, Բնունիսի համայնքում հ/ա N 7 500զծ.մ ծավալով:

Առուների զբաղեցրած մակերեսը կկազմի 3187.5մ<sup>2</sup>, իսկ ծավալը՝ 6375.0մ<sup>3</sup>, այդ թվում՝ 1753.0մ<sup>3</sup> IV կարգի և 4621.8մ<sup>3</sup>-ը՝ VI և VIII կարգի ապարներով:

Ըստ հայտի նախատեսվում է անցնել 18 հետախուզահոր մինչև 4.5մ խորությամբ, այդ թվում Արևիսի համայնքում 9.0 զծ.մ /հ/ա NN 1 և 2/, Թասիկի համայնքում 63.0 զծ.մ /հ/ա NN 3, 4, 5, 6, 7, 8, 9, 10, 11, 14, 16, 17, 18, 19/, Բնունիսի համայնքում 9.0 զծ.մ /հ/ա NN 12, 15, /: Հետախուզահորերի կտրվածքը ընդունվում է 1.5մ<sup>2</sup>, ընդհանուր 27.0մ<sup>2</sup> մակերեսով: Նախատեսված հետախուզահորերի ծավալը կկազմի՝ 121.5մ<sup>3</sup>, որից 14.5մ<sup>3</sup> IV կարգի ապարներում, իսկ 107.0մ<sup>3</sup>-ը՝ VI և VIII կարգի ապարներում:

Բոլոր լեռնային փորվածքները, համաձայն անվտանգության տեխնիկայի և շրջակա միջավայրի պահպանության կանոնների, փաստագրումից և նմուշարկումից հետո ենթակա են վերականգնման, որը ներառելու է հետախուզաառուներ՝ 6375մ<sup>3</sup>, հետախուզահորեր՝ 121.5մ<sup>3</sup>, ընդամենը՝ 6496.5մ<sup>3</sup> ծավալով:

Բոլոր լեռնային փորվածքները, հորատահանուկը, հետախուզաառուները, հետախուզահորերը ենթակա են երկրաբանական փաստագրման: Նախատեսվում է իրականացնել հետախուզական փորվածքների տեղադիրքի կապակցում, մակերևույթի թեքության անկյան և ազիմուտի չափում:

Կատարվելու է մերկացված ապարների ուսումնասիրություն, որի արդյունքում կտրվի ապարների լիթոլոգիական, պետրոգրաֆիական և միներալոգիական կազմը, կչափվեն և գծանկարների վրա կտեղադրվեն բոլոր հիմնական տեկտոնական խախտումները և ճեղքերը, հանքայնացված ենթագոտիները, երակները և երակիկները: Մանրամասն կնկարագրվեն ապարների հանքայնացման աստիճանը, առանձին միներալները և նրանց փոփոխվածությունը: Կկատարվի նմուշների վերցնում, դրանց պիտակավորում և փաթեթավորում, լեռնային փորվածքների նկարագրում<sup>8</sup> նմուշարկման միջակայքերի նշմամբ: Տեղամասի տոպոհիմքի վրա կնշվեն նմուշների վերցման տեղերը, որոնք կգրանցվեն համապատասխան մատյանում: Հորատահանուկի երկրաբանական փաստագրումը կկատարվի հաշվի առնելով հանքաերևակման երկրաբանական առանձնահատկությունները, կկազմվի 1:100 մասշտաբի երկրաբանական սյունակ հորատանցքի առանցքով, որտեղ ցույց կտրվի վերցվող հանուկը, երբեմն առանձին հատվածներում նաև նրանից դուրս եկող շլամը: Հանուկը հերթականությամբ կդասավորվի համապատասխան արկղերում ըստ հորատման երթերի հերթականության: Ապարների նկարագրությունը կկատարվի ըստ հորատման երթերի: Երկրաբանական փաստագրման աշխատանքներ նախատեսվում է կատարել 1:100 մասշտաբով, կատարվող շխատանքների ծավալները կկազմեն՝ հորատահանուկի փաստագրում - 3028.2զծ.մ, հետախուզահորերի փաստագրում - 81.0զծ.մ, հետախուզաառուների փաստագրում - 3750.0զծ.մ, ընդամենը - 6859.2զծ.մ:

Հանքանյութի քիմիական կազմը, ինչպես նաև հանքաքարում օգտակար հանածոյի որակական կազմը բնութագրելու նպատակով նախատեսվում է կատարվել նմուշարկման աշխատանքներ: Նմուշարկման կենթարկված վերգետնյա բոլոր լեռնային փորվածքները (հետախուզաառուները, հետախուզահորերը) և հորատանցքերը:



Նմուշարկման մեթոդիկան ընտրելիս հաշվի կառնվի հանքայնացման բնույթը, հանքամարմինների հզորությունը, ինչպես նրանց տարածման, այսպես էլ անկման ուղղություններով, նրանց կառուցվածքային առանձնահատկությունները: Նմուշարկումը կկատարվի ակոսային և հանուկային նմուշարկման մեթոդներով:

Նախատեսվում է նաև գործարանային պայմաններում 6 տեխնոլոգիական նմուշների փորձարկում: Հանույթը կատարվելու է հանքային զոնաներից և ցրոններից, որոնք կվերցվեն հետախուզաառուներից ընդհանուր՝ 1200.0տ ծավալով:

Մշակման ենթակա են ակոսային, հորատահանուկի և համախառն նմուշների ամբողջ քանակը՝ ընդամենը 1396 նմուշ: Նմուշների մշակման աշխատանքների կատարման որակը և ճշտությունը ապահովելու համար պետք է աշխատանքային բոլոր փուլերում իրագործել վերահսկման աշխատանքներ:

Ըստ նախնական գնահատման հայտի նախատեսվում է իրականացնել նաև քիմիական /լեռնային ապարների լրիվ սիլիկատային և մոնոմիներալային ֆրակցիաների լրիվ սիլիկատային անալիզներ/, պետրոգրաֆիկական ուսումնասիրություններ, ռենտգենեստրուկտուրային և սպեկտրիալ անալիզներ, հատուկ հեմոլոգիական ուսումնասիրություններ, ընդհանուր միներալոգիական անալիզներ:

Հարգային անալիզների ենթակա են բոլոր 1396 նմուշները: Հաշվի առնելով դրանց արտաքին և ներքին հսկողական անալիզների քանակը (5%), ապա հարգային անալիզների ընդհանուր քանակը կկազմի՝ 1465 նմուշ: Հարգային անալիզների որակը պետք է սիստեմատիկաբար հսկել /համաձայն մեթոդական ցուցումների/: Պատահական սխալի մեծությունը անհրաժեշտ է ստուգել հսկումով՝ անալիզի ենթարկված նմուշների կրկնօրինակների կողավորված կրկնակի անալիզով:

Հետախուզվող տարածքում ինժեներա-երկրաբանական և հիդրոերկրաբանական պայմանների պարզաբանման նպատակով նախատեսվում են կատարել համապատասխան դիտարկումներ: Ինժեներաերկրաբանական հետազոտություններով նախատեսվում է պարզել ապարների զանգվածների առանձնահատկությունները և կազմը, անիզոտրոպիան, ճեղքավորվածությունը և այլն: Նախատեսվում է կատարել նաև հանքերնական ներփակող և պարփակող ապարների ֆիզիկամեխանիկական հատկությունները, որով կորոշվի ապարների կայունությունը բնական պայմաններում:

Հիդրոերկրաբանական հետազոտություններով նախատեսվում է պարզել հանքային գոտիները ջրաբքի դարձնող հիմնական ջրատար հորիզոնները, ուսումնասիրել ջրի որակը և կատարել ռեժիմային դիտարկումներ:

Նախատեսվում է 15 հորատման հրապարակների կառուցում (մեկ հորատման հրապարակի մակերեսը 35.0մ<sup>2</sup>) ընդամենը 525.0մ<sup>2</sup> մակերեսով և 32.0կմ, 1.5մ լայնությամբ ճանապարհի նորոգում: Վերականգնման ենթակա հողաշերտի ծավալը ճանապարհների և հորատման հրապարակների համար կկազմի /վերականգնման ենթակա շերտի հզորությունը ըստ նախնական դիտարկումների կազմում է միջինը 0.30մ/՝ համապատասխանաբար 14400.0մ<sup>3</sup> և 157.5մ<sup>3</sup>:

Ընդերքի ուսումնասիրման աշխատանքները անմիջականորեն կապված են շրջակա միջավայրի պահպանման խնդիրների հետ: Որոնողական աշխատանքների իրականացումը շրջակա միջավայրի վրա կունենա որոշակի ազդեցություն և այդ ազդեցությունը նվազեցնելու կամ բացառելու նպատակով կկիրառվեն բնապահպանական հետևյալ միջոցառումները.

- պարբերաբար կհսկվեն մթնոլորտային օդի մաքրությունը հորատման հրապարակներում, ավտոճանապարհների վրա, նկատի ունենալով, որ օդում փոշու սանիտարական նորման չպետք է գերազանցի 0.004գ փոշի օդի 1մ<sup>3</sup>-ում;

- փոշեզրկման նպատակով աշխատանքային գոտիներում պարբերաբար կկատարվի ջրցանում;

- օգտագործվող ագրեգատները կաշխատեցվեն սարքին վիճակում վնասակար գազերի գերնորմատիվային արտանետումները բացառելու համար:

Ընդհանրացնելով և վերլուծելով ներկայացված նախնական գնահատման հայտը, ՀՀ բնապահպանության նախարարության համապատասխան ստորաբաժանումներից ստացված կարծիքները, 30.05.2017թ. Թասիկի համայնքապետարանի տարածքում իրականացված հանրային քնարկումների արձանագրությունը, ինչպես նաև փորձաքննական գործընթացում առաջարկությունների և դիտողությունների հիման վրա կատարված լրամշակումները կարելի է անել հետևյալ եզրահանգումները.

Արևիսի բազմամետաղների հանքային դաշտի որոնողական աշխատանքների տարածքը ընդգրկելու է շուրջ 7.98կմ<sup>2</sup> (798.0հա) մակերես, որը տեղակայված է Արևիս համայնքի հարավային ծայրամասում և ներառում է Արևիսի (1.11կմ<sup>2</sup>), Թասիկի (6.49կմ<sup>2</sup>) և Բնունիսի (0.38կմ<sup>2</sup>) համայնքների տարածքները:

30.05.2017թ. Թասիկի համայնքապետարանի տարածքում իրականացված հանրային քնարկումների ժամանակ հանրության կողմից հնչեցին դրական կարծիքներ և հավանություն նախատեսվող գործունեության վերաբերյալ: Նշվեց, որ ըստ նախնական գնահատման հայտի նախատեսվում է նշված տարածքում իրականացնել միայն երկրաբանահետախուզական աշխատանքներ: Հետագա հանքի շահագործման աշխատանքները կիրականացվի երկրաբանահետախուզական աշխատանքների դրական արդյունքների և հաստատված պաշարների հիման վրա համապատասխան նախագծային փաստաթղթերի կազմումից հետո, որը համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի փորձաքննության կենթարկվի երկու փուլով՝ որպես Ա կատեգորիայի նախատեսվող գործունեություն:


Առաջնորդվելով «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» ՀՀ օրենքով (ՀՕ-211-Ն 27.11.2006թ) և ՀՀ կառավարության 15.10.2009թ.-ի թիվ 1187-Ն որոշման հավելված 3-ի III-րդ և V-րդ բաժինների պահանջներով՝ Ընկերության կողմից նախնական հայցվող 988.0հա տարածքից բացառվել է «Ջանգեղուր» պետական արգելավայրի տարածքի հետ համընկնող 143հա-ը: Ըստ լրամշակված նախնական գնահատման հայտի՝ նախատեսված երկրաբանական ուսումնասիրության իրականացման աշխատանքների համար հայցվող տարածքը կազմել է 798.0հա:

Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների ընթացքում հետախուզատուների, հետախուզահորերի և խրամների, հողային զանգվածների բեռնման, բեռնաթափման և տեղափոխման, շինարարական տեխնիկայի տեղաշարժման ժամանակ կառաջանան անօրգանական փոշու արտանետումներ, շինարարական տեխնիկայի շարժիչների աշխատանքի արդյունքում կառաջանան դիզելային վառելիքի այրման արգասիքների արտանետումներ, որոնք կունենան ժամանակավոր բնույթ և կարտանետվեն հարթակային աղբյուրներից:

Հետախուզվող տարածքում նախատեսվում է բացառել անտառահատումը, իսկ որպես հորատման հրապարակները սպասարկող ճանապարհներ օգտագործել ամառանոցներ տանող ճանապարհները, վերջիններս բարեկարգելով: Ջրային ավազանի կեղտոտում չի նախատեսվում, քանի որ հանքերնակման տարածքում գրունտային ջրերը բացակայում են, իսկ լեռնային աշխատանքների տեխնոլոգիայով արտահոսքեր չեն նախատեսվում:

Աշխատանքների իրականացման ժամանակ անհրաժեշտ է հետևել բնապահպանական միջոցառումների կիրառմանը, որոնք ընդգրկում են հետևյալ հարցերը.

- օդային ավազանի պահպանումը վնասակար արտանետումներից՝ ջրցանման և աշխատանքներում սարքին մեքենասարքավորումների օգտագործմամբ:



- ջրային ավազանի պահպանումը կեղտոտումից՝ հորատման ժամանակ օգտագործվող ջրերը հատուկ կահավորված փոստրակներում հավաքմամբ և կրկին օգտագործմամբ, բացառելով ջրերի արտահոսքը;

- ապահովել լանդշաֆտների վերականգնման աշխատանքները՝ կատարելով խախտված հողերի լեռնատեխնիկական ռեկուլտիվացիա;

- հողերի պահպանության կարգի պահանջների ապահովում.

- կանխարգելել կամ մեղմացնել էկոհամակարգերի վրա մարդածին բացասական ազդեցության գործոնը;

- աշխատանքների հետևանքով բնությանը հասցված բացասական ազդեցությունների վերացում:

Հողի վերին շերտի պահպանության նպատակով նախագծով նախատեսվում է հետախուզաառուների, հետախուզահորերի, հորատահարթակների կառուցման ժամանակ հանել հողի շերտը, պահեստավորել, իսկ աշխատանքների ավարտից հետո, լանդշաֆտի վերականգնման նպատակով ծածկել հողաշերտով: Ռեկուլտիվացիայի ենթակա հողերի ծավալը հաշվարկվում է էլնելով հետախուզա-առուների, հետախուզահորերի տարածքի մակերեսից և հողաբուսաշերտի 0.30մ վերականգնման պայմանից: Հետախուզաառուների, հետախուզահորերի և հորատման հրապարակների ընդհանուր տարածքի մակերեսը կազմում է 3739.5մ<sup>2</sup> /հորատ-հրապարակներ 525.0մ<sup>2</sup>, հետախուզաառուներ 3187.5մ<sup>2</sup> և հետախուզահորեր 27մ<sup>2</sup>/, որտեղ հողաբուսական ծածկ առկա է միայն 52% մակերեսում, մնացած մակերեսը մերկ ժայռեր են: Ռեկուլտիվացիայի ընդհանուր ծավալը կազմում է՝ 583.0մ<sup>3</sup>, որը կատարվելու են ձեռքով: Ռեկուլտիվացիայի ընդհանուր գումարը կկազմի 340294.0 դրամ, այդ թվում հորատհրապարակների (525.0մ<sup>2</sup> մկերես) համար՝ 47775.0 դրամ, հետախուզաառուների (3187.5մ<sup>2</sup> մկերես) 290062.0 դրամ և հետախուզահորերի (27մ<sup>2</sup> մկերես) – 2475.0դրամ:

Երկրաբանահետախուզական աշխատանքների ժամանակ ժամանակավորապես օգտագործումից դուրս եկած հողերի ընդհանուր մակերեսը կազմում է 3739.5մ<sup>2</sup> կամ 0.37հա: Հողօգտագործման համար վնասի փոխհատուցման գումարը համայնքներին կկազմի՝ 55.5 հազ.դրամ:

Նախնական գնահատման հայտում ներկայացված բնապահպանական միջոցառումների իրականացումը հնարավորություն կտա նվազեցնելու կամ մեղմելու իրականացվող աշխատանքների ազդեցությունը շրջակա միջավայրի վրա, ինչպես նաև վերահսկելու նախատեսվող աշխատանքների գործընթացը: Նախատեսված միջոցառումների արդյունքում տարածքի աղտոտվածությունը՝ շրջակա միջավայրի բոլոր բաղադրիչներով, կգտնվի թույլատրելի նորմերի սահմաններում:

Նշեմ նաև, որ համաձայն <<Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին>> օրենքի հողված 20-ի 7-րդ կետի՝ փորձաքննական եզրակացությունը կորցնում է ուժը, եթե նախատեսվող գործունեության իրականացումը չի սկսվում փորձաքննական եզրակացության տրվելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում:

### Փորձաքննական պահանջներ

1. Մինչ գործունեության իրականացումն անհրաժեշտ է **22** օրենսդրությամբ սահմանված կարգով ստանալ համապատասխան համաձայնություններ և թույլտվություններ (մասնավորապես սեփականաշնորհված, գյուղնշանակության /ինչպես նաև անտառային/ հողատարածքներում աշխատելու նպատակով):





2. Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների իրականացման ընթացքում ելնելով տարածքի յուրահատկությունից, անհրաժեշտ է խստագույնս հետևել նախնական գնահատման հայտի փաստաթղթերում ամրագրված բնապահպանական (մասնավորապես՝ տարածքում առկա ջրային /գետեր, աղբյուրներ/ ցանցը աղտոտումից զերծ պահելու և պահպանությանն ուղղված, բացառելով հատուկ պահպանվող տարածքներում ցանկացակ աշխատանքների իրականացումը) միջոցառումների և սոցալ-տնտեսական ծրագրի, իսկ դրանց չբավարարման դեպքում ներառել լրացուցից միջոցառումներ՝ պարտադիր կարգով պահպանելով բնապահպանական, կառուցման և շահագործման հետ կապված բոլոր նորմերը:

3. Երկրաբանական ուսումնասիրության ընթացքում առաջացած շինադրի կուտակումն և հեռացումն (կենցաղային աղբ), ինչպես նաև ջրօգտագործումն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

**ԵԶՐԱԿԱՑՈՒ ԹՅՈՒՆ**

<<Գուլին Լենդ>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված <<Արևիսի բազմամետաղների հանքային դաշտում 2017-2020թթ. երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների>> շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն, վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

Գլխ. մասնագետ  Կ. Մովսիսյան